# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՀՆ Գրուպ ՍՊԸ-ն ՀՓ-ԷԱՃԱՊՁԲ-26/47 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 1 | Վերնաշապիկ՝ սպիտակ, դասական ձևի, կորպորատիվ ոճի, նախատեսված կորպորատիվ աշխատակիցների համար։ Չափերը ճշգրտվում են պատվիրատուի կողմից տրամադրված չափագրման աղյուսակով։ Օգտագործվող կտորը՝ T/C (TISI) 92% բամբակ, 8% սպանդեքս, Բամբակի նվազագույն պարունակությունը՝ 50%,Կտորի խտություն՝ 150–180 գ/մ²,Կտորի նախնական մշակում՝ թելերի ամրացման և գունային կայունության ապահովման համար։Ոճը՝ դասական, ուղիղ կամ թեթև սեղմված ձևով։Թևքեր՝ կիսաերկար (միջին երկարություն), եզրագոտին՝ 4–5 սմ լայնությամբ, կենտրոնական հատվածում ճեղքով։Օձիք՝ ծալովի, պատրաստված սատինե գործվածքից՝ խտությունը 80–90 գ/մ²։ Եզրագիծը մշակված է զարդակարով։Առջևի հատված՝ բաղկացած է երկու լանջափեղերից։ Յուրաքանչյուր կողմ մշակված է մեկ կարճ և մեկ ուղղահայաց սեղմոնով։Լանջափեղքերի միացումը կատարվում է կոճակներով։ Կոճակների շարքը քողարկված է 2–3 սմ լայնությամբ դարձով։ Հետնամաս՝ մեկ կտորից։ Գոտկային հատվածի ձևավորումն ապահովված է երկու ուղղահայաց սեղմոններով։Կարերը՝ երկակի, ամրացված յուրաքանչյուր կար մաքուր մշակված։ Լանջափեղքերի ծայրերը մշակվում են մաքրակարով, ծալքով և զարդակարով։Կոճակներ՝ սպիտակ գույնի, տրամագիծը՝ 1 սմ, քանակը՝ 7–8 հատ։ Կոճակները կարում են խաչաձև կարով՝ մեքենայական ամրացմամբ։Բոլոր կարերի ամրացումը կատարվում է ստանդարտ 301 կարի տեսակով։ Ձախ կրծքավանդակի հատվածում տեղադրվում է «Հայփոստ» լոգոտիպը։ Կիրառվող տեխնոլոգիան՝ ասեղնագործություն։ Ասեղնագործման թելերը բարձրորակ պոլիեսթերային են՝ գույնի կայունությամբ և մաշվածության դիմացկունությամբ։Յուրաքանչյուր պատրաստի արտադրանք փաթեթավորվում է առանձին |

| | |
|---|---|
| | թափանցիկ պոլիէթիլենային տոպրակով։ Տոպրակի վրա պարտադիր նշվում է՝ չափսը, նյութի կազմը, լվացման եղանակը, արտադրամասի անվանումը։ Պատվիրատուի կողմից նախնական հաստատման համար ներկայացվում է մեկ նմուշային արտադրանք։ " |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ""ХН ГРУП"" в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՓ-ԷԱՃԱՊՁԲ-26/47 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 1 | |